347
Հ-25

Հ. Խ. Ս. Հ.

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ

# ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

# ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ, ԸՆՏԱՆԻՔԻ ՅԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

347
Հ-25

Հրատարակություն Հայկական ԽՍՀ Ներքին Գործերի
Ժողովրդական Կոմիսարիատի

32-Ա
Աշ2745
1 MAR 2010

# ՀԽՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՍԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

**9. ՀԽՍՀ Կենտգործկոմի վորոշումը՝ «ՀԽՍՀ ամուսնության, ընտանիքի և խնամակալության որենսգրքի 135 հոդվածը փոխելու մասին»։**

*25-ին հուլիսի, 1935 թիվ*

ՀԽՍՀ ամուսնության, ընտանիքի և խնամակալության Որենսգրքի 135 հոդվածը փոխել և ընդունել հետևյալ բովանդակությամբ՝

«Ամուսնությունը տոմարագրել տվողները հայտարարության տալու ժամանակ պարտավոր են ներկայացնելու իրենց ինքնությունը հաստատող վկայականներ, ստորագրությունն՝ այս Որենսգրքի 1-ին բաժնի 2-րդ գլխում մատնանշված արգելքները չլինելու մասին և այն մասին, վոր նրանք փոխադարձաբար իրազեկ են իրենց առողջական վիճակի մասին, մասնավորապես վեներական—հոգեկան և պալարախտային հիվանդությունների վերաբերմամբ, ինչպես նաև մատնանշել, թե նրանցից յուրաքանչյուրը քանի՞ յերրորդ անգամն է ամուսնանում, հաշված և տոմարագրված և չտոմարագրված ամուսնությունները և քանի՞ զավակ ունի։

2. Նույն որենսգրքի նախկին 135 հոդվածի ծանոթությունը վերացնել։

Կենտգործկոմի Նախագահություն



# ՀԽՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

**113. ՀԽՍՀ ամուսնության, ընտանիքի և խնամակալության որենսգրքի 146 հոդվածը փոխելու և նույն Որենսգիրքը 147 և 148 հոդվածներով լրացնելու մասին։**

*1935 թ., դեկտեմբերի 25-ի*

Համաձայն Անդրկենտգործկոմի Նախագահության 1935 թ. նոյեմբերի 27-ի № 10 «Ծննդյան վերաբերյալ գրանցումների վոչնչացման դեպքում հասակը վորոշելու գրանցումների վերականգնման կարգի համար հանձնաժողով կազմակերպելու մասին» վորոշման, ՀԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն Վորոշում է.—

1) ՀԽՍՀ Ամուսնության, ընտանիքի և խնամակալության Որենսգրքի 146 հոդվածից հանել «ծննդյան» բառը։

2) ՀԽՍՀ ամուսնության, ընտանիքի և խնամակալության Որենսգիրքը լրացնել 147 և 148 հոդվածներով. հետևյալ բովանդակությամբ.—

Հոդված 147

«Այն դեպքում, յերբ քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մատյանները, կամ նախկին չափաբերական մատյանները իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների և տարերային աղետների ժամանակ կորել և վոչնչացել են, և կամ վորևէ պատճառով չարձանագրված անձերից անկախ, վերջիններին հնարավոր չէ քաղվածք կամ տեղեկանք

09 SEP 2013
37.305

տալ ծննդյան մասին—այդ անձերի հասակը վորոշվում է; ծննդյան վերաբերյալ գրանցումների վոչնչացման դեպքում, հասակը վորոշելու համար տոմարագրումը վերականգնելու քաղաքային և շրջանային քաղաքացիական ակտերի օրգաններին կից պարբերաբար գործող միջվարչական հանձնաժողովի կողմից»:

Հոդված 148

«147 հոդվածում նշված հանձնաժողովն ունի հետևյալ կազմը. —շրջանային Գործադիր Կոմիտեի կամ Քաղխորհրդի պատասխանատու ներկայացուցիչը, ԱՍՖԽՀ ՆԳԺԿ Քաղաքացիական ակտերի բաժանմունքների ներկայացուցիչները տեղերում և քաղ. շրջ. Առբաժնի ներկայացուցիչներ—բժիշկները»:

Կենտգործկոմի նախագահություն

# ՀԽՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

81. ՀԽՍՀ Ամուսնության, ընտանիքի և խնամակալության օրենսգրքի՝ 114, 121, 122, 125, 126, 128, 129, 131, 132 հոդվածները փոխելու և նույն օրենսգիրքը 133-ա հոդվածով լրացնելու մասին:

1936 թ. հոկտեմբերի 22-ի

Համաձայն ԽՍՀ Միության Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1936 թ. հուլիսի 27-ի՝ «Ծնունդների ու մահացությունների տոմարագրման կարգի ու ժամկետների մասին» (ԽՍՀՄ Օր. և կարգ. ժող. 1936 թ. № 44 հոդ. 369) վորոշման, ՀԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահությունը վորոշում է՝

1) ՀԽՍՀ ամուսնության, ընտանիքի և խնամակալության օրենսգրքի 114, 121 ,122, 125, 126, 128, 129, 131 և 132 հոդվածները փոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ:

Հոդված 114

Ծննդյան, մահվան ամուսնության, ապահարզանի և վորդեգրման գրանցումները քաղաքներում և շրջանային կենտրոններում կատարում են քաղաքացիական ակտերի կացության գրանցումների (Զագս) քաղաքային և ռայոնական բաժանմունքները (բյուրո), իսկ գյուղական վայրերում և բանվորական ավաններում՝ գյուղական և ավանային խորհուրդները:

Հոդված 121

Ծննդյան վերաբերյալ հայտարարությունը պետք է տրվի մեկ ամսից վոչ ուշ, հաշված ծննդյան օրից:

Հոդված 122

Յերեխայի ծնունդը պետք է տոմարագրվի ծնողների կամ նրանցից մեկն ու մեկի հայտարարության հիման վրա: Ծնողների հիվանդության, մահվան դեպքում կամ վորևէ պատճառով հայտարարություն տալու հնարավորությունից զուրկ լինելու դեպքում, ազգականների կամ այլ անձնավորությունների հայտարարությամբ, վորոնց խնամքի տակ գտնվում է յերեխան:





ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
56710-66

## Հոդված 125

Ծննդյան մասին հայտարարությունը պետք է տրվի նաև յերեխայի մեռած ծնվելու դեպքում, վորի տոմարագրությունը կատարվում է 24 ժամից վոչ ուշ, հաշված ծննդյան պահից։

## Հոդված 126

Տոմարագրությունն անհրաժեշտ է նաև յերեխա գտնելու դեպքում. այս դեպքում հայտարարությանը պետք է կցվի միլիցիայի կողմից կազմված արձանագրությունը, իսկ միլիցիա չլինելու դեպքում՝ գյուղխորհուրդինը, հիշատակելով յերեխայի գտնելու ժամանակը, տեղը և հանգամանքը։ Դրանց տոմարագրությունը կատարվում է յերեխա գտնելուց 3 որից վոչ ուշ։

## Հոդված 128

Տեղի ունեցած մահվան մասին հայտարարությունը պետք է տրվի կատարված դեպքից վոչ ուշ, քան յերեք որվա ընթացքում։ Բռնության հետեվանքով տեղի ունեցած մահվան (սպանության), այլև ինքնասպանության կամ դժբախտ դեպքի հետեվանքով տեղի ունեցած մահվան տոմարագրությունը կատարվում է քննչական մարմինների կամ բանվորա-գյուղացիական միլիցիայի հայտարարության հիման վրա. 24 ժամից վոչ ուշ այն տեղի ունենալու պահից, կամ դիակը հայտաբերելու պահից և վոչ այլ կերպ, քան մահվան պատճառի մասին բժշկի տված տեղեկանքի հիման վրա։



## Հոդված 129

Մահվան մասին հայտարարությունը պետք է տրվի գրավոր կամ բանավոր՝ մահացածի հետ միասին ապրողների կողմից, իսկ յեթե այդպիսիք չկան—տնային վարչության, հարևանների կամ այլ հաստատության (հիվանդանոց, ուղղիչ աշխատանքի հիմնարկություն և այլն) վարչության կողմից, վորտեղ մահը տեղի յե ունեցել։

## Հոդված 131

Ծննդյան և մահվան դեպքերը տոմարագրելուց խուսափելու, այլ և տոմարագրելու համար 121, 125, 126 և 128 հոդվածներում վորոշված ժամկետները չպահպանելու համար շրջանային գործադիր կոմիտեների, քաղաքային, գյուղական ու ավանային խորհուրդների վորոշումներով սահմանվում է 25-ից մինչև 100 ռ. տուգանք։

## Հոդված 132

Ծնունդների և մահվան դեպքերի յուր ժամանակին և ճշտությամբ տոմարագրումների ապահովման պատասխանատվությունը, (տոմարագրումների ժամկետների ու կարգի մասին ազգաբնակչությանը ծանուցելու, տոմարագրումից խուսափելու դեպքերի հայտաբերելը, քաղաքացիական ակտերի մատյանների կանոնավոր վարումը և այլն) դնել՝ քաղաքներում— առանձնապես Զագս-ի շրջանային և քաղաքային բաժանմունքների (բյուրո) վարիչների վրա, իսկ գյուղական վայրերում առանձնապես գյուղական և ավանային խորհուրդների համապատասխան քարտուղարների վրա։



ՀՀ Ազգային գրադարան

159

37.305

2) ՀԽՍՀ ամուսնության, ընտանիքի և խնամակալության օրենսգիրքը լրացնել 133-Ա հոդվածով, հետևյալ բովանդակությամբ՝

Հոդված 133-Ա

Պաշտոնատար անձինք, վորոնք անհիմն կերպով կմերժեն ծնունդների և մահվան դեպքերի տոմարագրումը, իր ժամանակին չեն կատարի տոմարագրումը, ինչպեսնաև իր ժամանակին չեն ներկայացնի, և կամ ազգաբնակության բնական շարժման հաշվառման մասին կներկայացնեն սխալ տեղեկություններ, յենթարկվում են քրեական պատասխանատվության՝ ՀԽՍՀ Քր. Օր. 137 հոդվածով։

Կենտգործկոմի նախագահություն

ՊԵՏԱԿԱՆ ԳՐ-ԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀԽՍՌ-Арм ССР
им А. Мясникяна

Հայպ. Տպ. Գլավլիտի լիազոր 1019 Պատվեր 232 Տիրաժ 800